

## ՀԱՅՈՑ ԳՐԵՐՈՒԻ ԳԻՒՏԻՆ ԱՌԹԻՒ

Հայոց գրերի գիւտի 1500 ամեակի եւ տը-  
պաղբութեան 400 ամեակի առթիւ ն . Սրբու-  
թեան կարգադրութեամբ կազմուած եւ հաս-  
տատուած է խմբագրական մի մասնաժողով ,  
որի վերայ պարտաւորութիւն է դրուած մի  
գիտական ժողովածու հրատարակել միացեալ  
երկու մեծ տօներին վայել լրջութեամբ եւ  
ճոխութեամբ : Ժողովածուի նիւթ պէտք է լինի  
ընդարձակ մտքով հասկացուած հայագիտա-  
կան ամեն մի յօդուած , այսինքն հայ պատմու-  
թեան , մատենագրութեան , լեզուի , հնագի-  
տութեան եւ արուեստի , աշխարհագրութեան ,  
ազգագրութեան ևլն . վերաբերեալ , որ կ'ըն-  
դունուի խմբագրական մասնաժողովի կողմից :  
Յօդուածի ծաւալը պէտք է լինի ոչ աւելի , քան  
երկու տպագրական թերթ : Իւրաքանչիւր ե-  
րեսի համար նշանակուած է մի ըուբլի վար-  
ձատրութիւն : Այսու Մ . Աթոռի կարող միա-  
բաններից եւ Ճեմարանի ուսուցիչներից զատ՝  
հրաւիրւում են եւ դրսի հայ բանասէրները  
մասնակցելու մեր կազմելիք ժողովածուին :  
Յօդուածները պէտք է ուղարկուեն ոչ ուշ քան  
հոկտեմբերի վերջը : Զընդունուած յօդուած-  
ները հեղինակների ցանկութեան համեմատ  
յետ կուղարկուին երենց :

Խմբագրական Մասնաժողովի

Փոխ-նախագահ՝

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Քարտուղար՝

ՍՏԵՓԱՆ ԿԱՄԱՅԵԱՆՑ